

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արա Նռանյանի, Արծվիկ Մինասյանի, Արմեն Ուստամյանի և Արտյոշ Շահբազյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Համաձայն նախագծերի հիմնավորման՝ դրանց ընդունումը պայմանավորված է Եվրամիության դիրեկտիվների հետ անհամապատասխանությունը վերացնելու հետ:

Մինչդեռ, Եվրամիության «Ապահովագրության և վերաապահովագրության մասին 138/2009/ԵՀ հրահանգով նախատեսվում է ուղղակի ապահովագրություն, այն է՝ կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն (համապատասխան դասերով և ենթադասերով) և վերաապահովագրություն: Համաձայն հրահանգի 2-րդ հոդվածի՝ նշված հրահանգի դրույթները տարածվում են ուղղակի ապահովագրություն իրականացնող ընկերությունների վրա, ինչպես նաև բացառապես վերաապահովագրական գործունեություն իրականացնող վերաապահովագրական ընկերությունների վրա: Ընդ որում, բացառապես վերաապահովագրական գործունեություն իրականացնելու համար ընկերությունները պետք է ստանան վերաապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա:

Հրահանգի բովանդակությունից ակնհայտ է նաև, որ վերաապահովագրական գործունեություն կարող են իրականացնել նաև ապահովագրական ընկերությունները: Հրահանգի նախաբանում, որտեղ ամրագրված են այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա մշակվել է հրահանգը, սահմանվում է, որ ապահովագրական ընկերության կողմից վերաապահովագրական գործունեության հայեցակարգը, որն իրականացնելու համար ապահովագրական ընկերությունը պետք է թույլտվություն ստանա, կարգավորված չէ, և յուրաքանչյուր անդամ պետությունն է որոշում սահմանել դրա հետ կապված կանոնները:

Բացի դրանից՝ հաշվի առնելով այն, որ ամբողջ աշխարհում վերաապահովագրական գործունեությունը, համարվելով մեծածախ բիզնես, առավել ռիսկային է, քան ապահովագրական գործունեությունը, հետևաբար, վերաապահովագրության կարգավորման նկատմամբ պահանջներն առավել խիստ են: Օրինակ, վերաապահովագրության գործունեության համար ընդհանուր կապիտալի նկատմամբ սահմանվում է ավելի մեծ պահանջ: Կարգավորման տարբերակված ռեժիմ կիրառելու համար պետք է կիրառել լիցենզավորման առանձին պահանջ՝ իրականացվող յուրաքանչյուր գործունեության համար (ապահովագրության և վերաապահովագրության): Հակառակ դեպքում հնարավոր են հետևյալ 2 տարբերակները՝

1) վերաապահովագրության լիցենզավորումն ավտոմատ լինելու դեպքում սահմանել կարգավորման խիստ ռեժիմ նաև ապահովագրական գործունեությամբ զբաղվող ընկերությունների վրա, ինչը կարող է խոչընդոտել Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկայի զարգացմանը, կամ՝

2) վերաապահովագրության լիցենզավորումն ավտոմատ լինելու դեպքում սահմանել կարգավորման թույլ ռեժիմ նաև վերաապահովագրությամբ զբաղվող ապահովագրական ընկերությունների համար, ինչը կարող է վտանգել Հայաստանի Հանրապետության ապահովագրական շուկայի ֆինանսական կայունությունը:

Բացի դրանից՝ թույլատրելով ապահովագրական գործունեությամբ զբաղվող ընկերություններին ավտոմատ կերպով զբաղվել վերաապահովագրությամբ՝ առանց ներկայացնելու վերաապահովագրական գործունեությամբ զբաղվելու հիմնավորումը, դրանով իսկ հնարավորություն կընձեռենք Հայաստանի Հանրապետության ապահովագրողներին վերաապահովագրությամբ այլ երկրներից ստանձնել կասկածելի ռիսկեր, ինչը երբեմն էլ կարող է ուղեկցվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը համարում է անընդունելի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին Է Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

ՀՈՂՎԱԾ 1. Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին Է Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 5-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել հետեւյալ նոր նախադասությամբ.

«Ապահովագրական գործունեության լիցենզիան ներառում է դրանում նշված դասով (դասերով) վերաապահովագրական գործունեությունը:»

2. 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Ընկերությունը կարող է միաժամանակ իրականացնել վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որով ունի ապահովագրական գործունեության լիցենզիա:»

3. 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Վերաապահովագրական ընկերությունը կարող է միաժամանակ իրականացնել 7-րդ հոդվածում նշված կյանքի եւ ոչ կյանքի ապահովագրության դասերով վերաապահովագրական գործունեություն:»

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերից հանել «եւ վերաապահովագրությանն բառերը:

ՀՈՂՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Նախագիծ
Պ-937-29.06.2010-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Լիցենզավորման մասին Է Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ
կատարելու մասին**

ՀՈՂՎԱԾ 1. «Լիցենզավորման մասին Է Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՀՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 6-րդ բաժնում՝

1. 11-րդ կետի 2-րդ սունյակի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացումը».

2. 12-րդ կետի 2-րդ սունյակի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ոչ կյանքի ապահովագրության յուրաքանչյուր դասի վերաապահովագրության իրականացումը»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22.04.1996թ. Լյուքսեմբուրգում ստորագրված Գործընկերության եւ համագործակցության մասին մի կողմից` Հայաստանի Հանրապետության եւ մյուս կողմից` Եվրոպական համայնքների (այսուհետեւ` Համայնք) ու դրանց անդամ պետությունների միջեւ համաձայնագրի (ուժի մեջ է մտել 01.07.1999թ.) "Օրենսդրական համագործակցություն" 5-րդ բաժնի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարելու պայման է սահմանվել Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաև ապագա օրենսդրության մերձեցումը Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունն աստիճանաբար դարձնել համատեղելի Համայնքի օրենսդրության հետ:

"Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին" (22.05.2007թ. թիվ ՀՕ-177-Ն) ՀՀ օրենքի ընդունմամբ փորձ է արվել համապատասխանեցնելու Հայաստանի ապահովագրության ոլորտը Համայնքի օրենսդրությանը: Սակայն, վերաապահովագրության լիցենզավորման մասով համապատասխանություն չի ապահովվել:

Մասնավորապես, Համայնքի օրենսդրությանը համապատասխան ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն միաժամանակ իրականացնելու նաև վերաապահովագրական գործունեություն միայն այն դասով, որի համար ունեն ապահովագրության գործունեության լիցենզիա: Ի տարբերություն դրան, Հայաստանում ապահովագրական ընկերությունների կողմից վերաապահովագրության գործունեություն իրականացնելու համար եւս պահանջվում է առանձին լիցենզիա, որը ներառում է կյանքի կամ ոչ կյանքի ապահովագրության բոլոր դասերը:

Ներկայացվող օրենքի նախագծով վերացվում է վերաապահովագրության լիցենզավորման մասով հակասությունը` Հայաստանի Հանրապետության եւ Համայնքի օրենսդրությունների միջեւ: